

ՇԱՆԵ ԱՐԵՂԱ ԱՆԱՆՅԱՆ

ՆԱՄԱՍ ԱՐԵՒԵԼՅԻ՝ ԹԱԳԱՎՈՐ, ԹԵ՛ ՄԱՏԵՆԱԳԻՐ

Ա. Նամամ Արեւելցին իբրեւ պարմական կերպար և Աղվանից թագավոր

Աղվանից թագավորության պարմության մեջ վերելքի և վայրէջքի ժամանակաշրջանները հաջորդում են միմյանց ինչպես քաղաքական, այնպես էլ կրոնամշակութային գերնի վրա: Պարական-քաղաքական այդպիսի մի վերելքի շրջան ապրեց Աղվանից պարմությունը մեծ իշխան, ապա նաև թագավոր Նամամ Արեւելցու օրոք (Թ- դարի վերջ)¹: Նույն ժամանակաշրջանով թվագրված մի քանի աստվածաբանական-քերականական երկեր նույնպես վերագրվում են Նամամ անունով հեղինակի, որի ինքնության վերաբերյալ արտահայտվել են ամենաբարբեր թեր և դեմ կարծիքներ: Բազմաթիվ ուսումնասիրողների կողմից թագավորն ու մարտնչակիրը դիտարկվել են իբրեւ միեւնույն պարմական անձը՝ Թ-դարավերջի աղվանից նշանավոր թագավորն ու կրոնական գործիչը²: Ներկա ուսումնասիրությունը նպատակ ունի քննելու այս՝ հաճախ չարդարացված և չհիմնավորված նույնացումը Թ-Ժ դարերի անդրկովկասյան պարմությունների պարմական և կրոնական-մշակութային զարգացումների բնմի վրա:

Ընդունված արեսակեր է, որ Նարալային Կովկասի փարածաշրջանը Բյուզանդական և Մասսանյան կայսրությունների հեղ իր հարաբերություններում, ինչպես նաև Է-դարում արաբների կողմից նվաճվելուց հետո և արաբա-բյուզանդական անընդմեջ պարերազմների ընթացքին պարզ ու հասարարուն կառուցվածք ունեցող աշխարհ չէր³: Զաղկեղոնական և հակաբաղկեղոնական կրոնական ավանդությանց կրող հարեան ժողովուրդների կրոնական-մշակութային հակասություններն ավելի էին սրում փարածաշրջանի առանց այդ էլ լարված քաղաքական իրավիճակը: Մակայն արաբների ի հայր գալով և Արմինիա արաբական նոր վարչամիավորի ստեղծումով հակադրություններն ու ներհակությունները քնդավորվեցին մի նոր դաշտ՝ այս անգամ արդեն միասնական ճակար կազմելով ընդդեմ արաբական օրեցօր աճող վրանգի: Նայասարանը, Վրաստանն ու Աղվանքը, Ը դարի սկզբից սկսած հայրնվելով արաբական միեւնույն վարչամիավորի կազմում՝ կազմեցին քա-

1 Տե՛ս Մովսես Կաղանկարացի, Պարմություն Աղուանից (՝ՊԱ), քնն. բնագիր, ներածություն և ծնթ. Վ. Առաքելյանի, Երևան, 1983, էջ 335:

2 «Էջմիածին» ամսագրի համարներից մեկում («Էջմիածին», 2009, Ե, էջ 48-58) Նամամ Արեւելցի մարտնչակրի և մեկնիչի մասին մեր հոդվածում, նպատակ չունենալով անդրադառնալ հեղինակի կենսագրության փաստերին ու խնդիրներին, պայմանականորեն ընդունել էինք Ա. Մնացականյանի արեսակերը, ըստ որի Նամամ Արեւելցու անվան փակ նույնացվում են թագավորն ու մարտնչակիրը: Մակայն մեր հերագա պրպարմները մեզ բերեցին բոլորովին փարբեր մի կարծիքի, որով, պարմական և սկզբնաղբյուրային փվյալների հիման վրա Նամամ Արեւելցի մարտնչակիրն ու թագավորը դիտարկվում են իբրեւ փարբեր և առանձին պարմական կերպարներ (այս մասին ավելի մանրամասն արե՛ս ստորեւ):

3 Տե՛ս B. Martin-Hisard, Constantinople et les archontes du monde caucasien dans le «Livres des ceremonies II, 48», Travaux et Mémoires 13, Paris 2000, էջ 361, Z. Rubin, Eastern Neighbours: Persia and the Sassanian Monarchy, in *The Cambridge History of the Byzantine Empire (224-651)*, ed. J. Shepard, Cambridge University Press 2008, էջ 130-155:

ղաքական միասնական մի նոր միավոր եւ հասկացություն, որն էլ վճռորոշ դարձավ Կարա-
ծաշրջանի պայքարության հերթագա ողջ ընթացքի համար⁴: Այսպիսով, այն բոլոր ազգային
հերոսներն ու թագավոր-իշխանները, որոնց ջանքերն ու գաղափարները համահունչ էին
արաբական լծի փակ գլուխը կռվող կռվողական ժողովուրդների ազգային-կրոնական նվիրական
զգացումներին, անմիջապես ընկալվում եւ գաղափարվում էին իբրեւ ընդհանրապես Անդր-
կովկասի պայքարության նվիրական կերպարներ ու օրինակներ: Սույն հոդվածի նպատակն
է ներկայացնելու Նարավային Կովկասի հերոսացված թագավոր-իշխաններից մեկին՝ Նա-
մամ Արեւելցուն, որը հավասարապես հայրենի է նաեւ արաբական, վրացական եւ հայկա-
կան սկզբնաղբյուրներից: Նրա քաղաքական դերն ու կշիռն այնքան մեծ էին ու նշանակա-
լից, որ հերթագայի աղբյուրներում նրան են վերագրվել նաեւ մանկավարժական-աստվա-
ծաբանական բնույթի աշխատություններ՝ այդպիսով ընդգծելով նրա բացառիկ դերը մեկ
այլ կարեւոր ձեռնարկի մեջ, որ է հայ եկեղեցական ավանդության մեջ Սաղմոսաց գրքի ծի-
սական կիրառման բարեփոխումն ու նորացումը: Այդպիսով սրելով մեկ Նամամի՝ թագավո-
րական եւ կրոնական գործառնություններով ճշտագած երկակի կերպարը՝ միջնադարյան հայ
սկզբնաղբյուրները շեշտել են հարկապես Նամամի՝ իբրեւ բարեպաշտ եւ ճգնալյաց անձի
կյանքի մանրամասները՝ կյանքի երկրորդ մասում նրան ներկայացնելով որպես վանական
սքեմն ընդունած եւ առանձնացած պարզ մենակյացի՝ Նովհաննես անունով:

Սույն ուսումնասիրության առաջին մասում փորձելու ենք ներկայացնել Նամամ թա-
գավորի պայքարական կերպարը՝ միաժամանակ հստակեցնելով Նովհաննես-Սուրավիա եւ
Նամամ Արեւելցի, Նովհաննես Բագրատունի եւ Նամամ Արեւելցի կերպարների շփոթության
մանրամասներն ու պայքարական անհամապարասխանությունները: Այս առումով, հնարա-
վորին չափ ամբողջական կերպով ներկայացնելու համար ժամանակի պայքարադա-
րական իրավիճակը, անդրադառնալու ենք նաեւ Նամամ Արեւելցի մեծ իշխանի եւ թագավորի
կյանքի որոշ մանրամասներին: Աշխարհի երկրորդ մասում մի քանի նախնական դիպո-
ղություններ կառաջադրվեն Նամամ Արեւելցուն վերագրված ծիսական բարեփոխության
վերաբերյալ՝ ուրվագծելով դրա առաջացման եւ զարգացման հնարավոր աղբյուրներն ու
ուղիները:

1. Նամամ Արեւելցին եւ Աղվանից թագավորության վերականգնումը

Նամամն իբրեւ պայքարական կերպար. Ըստ Կաթողիկոս Նովհաննես Դրասխանա-
կերպցու՝ Նամամի դերը մեծ էր Գեորգ Բ Գառնեցի Կաթողիկոսին Արաբաբանի Սաջ-
յան ամիրա Յուսուֆի գերությունից փրկագնելու գործում⁵: Անանիա Մոկացի Կաթողիկոսի
վկայության համաձայն՝ հենց Նամամի խնդրանքով էր, որ Անանիա Կաթողիկոսն Աղվանից
Կաթողիկոս օծեց ոմն Նունանի⁶: Նամամի՝ իբրեւ պայքարական անձի վերաբերյալ բազմա-

4 Տե՛ս **А. Тер-Гевондян**, Армения и Арабский халифат, Ереван, 1977, էջ 71-75, **К. Юзбашян**, Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв., Москва, 1988, էջ 35-45:

5 **Նովհաննես Դրասխանակերպցի**, Պատմություն Նայոց, Թիֆլիս, 1912, էջ 170:

6 «Տեառն Անանիայի Նայոց Կաթողիկոսի Յաղագս ապստամբութեան Տանն Աղուանից», ներած. եւ քնն. բնագիր
Ա. Բոգոյեանի, Մարտնագիրք Նայոց, հր. Ժ. Անթիլիս, Լիբանան, էջ 262. «Բակ իշխանն Գրիգոր աղայէր, զի
զԳագիկ երկրորդ անգամ ձեռնադրեալ թողումք նմա, արինակ մեզ փալով եւ առ անհաւանութեան **գարաբեալ**

թիվ քրեություններ են առաջադրվել: Ուսումնասիրողների մի խմբի համաձայն Հովհաննես Բագրատունի վանականը և Աղվանից Համամ թագավորը նույն պարմական անձն էին, իսկ մեկ այլ խմբի կարծիքով՝ անհրաժեշտ է առանձնացնել Հովհաննես-Մուավիային և Համամ Արևելցուն՝ իբրև քաղաքական ժամանակաշրջաններում իշխած աղվանական իշխան-թագավորների: Յուրօրինակ լուծում է առաջարկում նաև Ս. Բարխուդարյանը՝ պարմական այս երեք անձերին դիտարկելով իբրև միևնույն պարմական կերպար՝ Համամ-Հովհաննես-Մուավիա անունով⁷: Սակայն ավելի հստակ և պարզորոշ պարկեր ունենալու համար անհրաժեշտ է վերլուծել առկա խնդիրներն ու առաջադրված քրեություններն իրենց պարմաաշխարհագրական և կրոնական-մշակութային համապրկություն:

Պարզաբանումների ամենից շար կարող հարցը Համամի ծագման և դինաստիական պարկանելության խնդիրն է. արդյոք ծագում էր Բագրատունյաց շառավիղներից⁸, թե՛ Աղվանիքի բնիկ Առանշահիկ նշանավոր քոհմից⁹: Համենայն դեպս, անմիջապես է. որ Աղվանից Շաքե-Ներթիի, ինչպես ընդունված է կոչել, թագավորության հզորացման նոր շրջանը կապված է Համամի նախապապի՝ իշխան Սահիկ անվան հետ¹⁰: Մմբարի որդի Սահիկ¹¹ 837 թվականի ամռանը գերեվարում է ապստամբ Բաբելին, երբ վերջինս փորձում էր Արաքս գետին անցնելով փրկվել իրեն հետապնդող խալիֆայական զորքերից: Սահիկ Բաբելին հանձնում է խալիֆին¹²: Արաքս պարմիչներ ալ-Տաբարին (Ժ դ. սկիզբ) և ալ-Դինավարին (Ժ դ. վերջ) ոչինչ չեն խոսում Սահիկ ծագման մասին¹³: Նրանք

Կրեան Գերգայ Նայոց Կաթողիկոսի առ Յունան Աղուանից Կաթողիկոս, ի ձեռն երանելոյ թագաւորին Համամայ քարեխաւութեան:

7 Տե՛ս Ս. Բարխուդարյան, Արցախի, Շաքիի և Փաշխոսի իշխանությունները 9-10-րդ դդ., «Պարմաբանասիրական հանդես» (ՊԲՀ) 1 (1971), էջ 64, Նույնի՝ «Страницы из истории Арцаха и Армяно-албанских отношений», Ереван, 2011, էջ 56-90:

8 Այս կարծիքի ամենահեղինակավոր պաշտպաններն են **Ղ. Ալիշանը** (Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 96-97), **J. Marquart**, Osteuropäische und ostasiatische Streifzüge, ethnologische und historisch-topographische Studien zur Geschichte des 9. und 10. Jahrhunderts, Leipzig 1903, էջ 391-465, նույնի հայերեն թարգմանությունը՝ «Բագրատունյաց ծագումը»: Ա. Նայ Բագրատունյաց ճաղագրությունը, Բ. Վրական Բագրատունյաց ծագումը, թրգմ. և ծնթ. Ն. Մ. Նալոզեան, Վիեննա, 1913, էջ 47-57), **Ն. Աղոնցը** («Բագրատունիների փառքը», Երկեր, հր. Ա. Երեան, 2006, էջ 506-514):

9 Տե՛ս **Բ. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը 10-16-րդ դդ., Երեան, 1975, էջ 63-87, **Ա. Նախորեան**, Խաչեն-Խոխանաբերդը և նրա իշխանությունը 9-13-րդ դդ., «Նախորեան Ամսօրեայ» (ՆԱ), (2010) 1-12, էջ 71-171, **Ա. Եղիազարեան**, Աղուանից թագաւորութեան պարմութեան մի քանի խնդիրների շուրջ, ՆԱ, 1-12 (2009), էջ 137-170, **B. Martin-Hisard**, op. cit., էջ 498-499: Առանշահիկ քոհմի պարմության մասին կրն **Ա. Սվազյան**, Աղվանից աշխարհի պարմություն, Երեան, էջ 225-260:

10 Տե՛ս **C. Zuckerman**, A propos du Livre des ceremonies II, 48, III: Albanie caucasienne au X^e siècle, *Travaux et Mémoires* 13, Paris, 2000, էջ 564, **Минорский В. Ф.**, История Ширвана и Дербенда X-XI веков, Москва, 1963, էջ 30: Վերջինիս կարծիքով 822 թ. վերջին Առանշահիկ Վարազ-Տրդատ Բ-ի սպանությունը *առանշահիկ* քոհմի անցում է Մմբարի որդի Սահիկ : Միևնույնի, ինչպես նկատելի է, *առանշահիկ* անունը համարում է նաև իբրև իշխանական քոհմ:

11 Միքայել Ասորին նշում է, որ Սահիկն կոչում էին նաև Սահակ («Ժամանակագրություն Միքայելի Ասորաց պարիարքին», Երուսաղեմ, 1871, էջ 365, նույնի ֆրանսերեն թարգմանությունը **V. Langlois**, Chronique de Michel le Grand, Venise 1868, էջ 270: Ասորերեն բնագիրն այս հարցում երկբորում է հայերեն թարգմանությանը : Ավելին, Սահիկ-Սահակը Սյրեփանոս իշխանի օգնությամբ է Արրապարականի Սաջյան ամիրա Ալիշիկի մոտ քանում գերեվարված Բաբելին (տե՛ս «Chronique de Michel le Grand», éd. et tr. par J.-B. Chabot, Paris 1905, vol. III, էջ 90):

12 Տե՛ս **Արու Նանիֆա ալ-Դինավարի**, Մալյան երկարապարում ավանդությունների, թրգմ. Ա. Տեր-Ղևոնդյան «Արաքս մարմնագիրներ», Թ-Ժ դարեր, Երեան, 2005, էջ 218 :

13 Տե՛ս «Արաքսի մարմնագիրներ Նայասարանի մասին», հավաքեց և թարգմանեց Բ. Խալաթեանց, Վիեննա, 1919, էջ 92 : Բալագուրին իր «Երկրների նվաճում» գրքում հավելյալ քննություն է քալի Սահիկ՝ մինչև Բաբելին

պարգապես նշում են, որ Սահլ բեն Սմբարը՝ քրիստոնյա իշխաններից մեկը, ճանաչում է վաճառականի զգեստի փակ ծպտված Բաբելին, քանի որ նախկինում եղել էր Բաբելի պարանդը¹⁴։ Նույն արար մարենագիրները պարմում են նաև խալիֆի կողմից Սահլին փրկված պարզեղների մասին։ Ըստ այսմ, մեկ միլիոն դիրհեմ դրամական պարգևից բացի, Սահլն ստանում է նաև թանկագին քարերով զարդարված իշխանական գոտի և բարբիկի, իմա՝ իշխանի թագ։ Խալիֆն իրավունք է փալիս Սահլին՝ նշանակելու իր փարածքների կառավարիչներին¹⁵։ Ըստ Մովսես Դասխուրանցու՝ Սահլը դառնում է Աղվանքի, Նայասարանի և Վրաստանի իշխան¹⁶։ Նաջորդ փարի *րեքսնց րեք* Նովհաննեսը, դառնալով Նայասարանի, Վրաստանի և Աղվանքի իշխան, խալիֆին խնդրում է իրեն վերադարձնել այդ երեք երկրները¹⁷։ Նակառակ Մովսես Դասխուրանցու վկայությամբ՝ Մեծիրանց/Մեծարանց Սուրբ Նակոբ վանքում պահպանված արձանագրության մեջ, որը ժամանակակից է րեքանց րեք Նովհաննեսին, վերջինս կրում է համեստ «Աղվանից իշխան» փիլդոսը. «ՅԲ (853թ.) թուականութեանս Նայոց, ի ժամանակս Յովանիսի, Աղվանից իշխանի, ես Սողոմոն Մեծարանց եպիսկոպոս կանգնեցի գՍբ. Խաչս գմե...»¹⁸։ Ի՛նչ է նշանակում *րեքսնց րեք* փիլդոսը։ Ադունցի րեսության համաձայն¹⁹՝ կարելի է թերևս ենթադրել, որ փիլդոսը Մեծ իշխանի կամ թագավորի որդուն և եղբորը վերապահված մի գործառույթ էր։ Նույն ժամանակաշրջանի երկու այլ վիմագրություն կարող են հաստատել այս դիտարկումը։ Ըստ առաջինի՝ գրված Վահեվանում (903թ.), սպարապետը հանդես է գալիս նաև իբրև *րեքսնց րեք*. «Ես Շապուհ Բագրատունի, Նայոց սպարապետ, *րեքսնց րեք*, որդի Աշոտյ Նայոց թագաւորի, մեծին Սմբարայ, հարագար եղբար իմոյ...»²⁰։ Երկրորդ արձանագրությունը՝ պահպանված Արուճի եկեղեցում (869թ.), նույնպես հաստատում է սպարապետի և *րեքսնց րեք* փիլդոսակրի նույնացումը. «ՅԺԸ թուականիս Նայոց յիշխանութեան Աշոտյ եւ ի *րեքութեան* Սմբարայ Նայոց սպարապետի Բագրատունոյ եւ ի կաթողիկոսութեան Զաքարիայի...»²¹։ Ամենայն հավանականությամբ, այս երկու փիլդոսները բնորոշ էին Բագրատունյաց հարստության ներկայացուցիչներին՝ ի թիվս Անդրկովկասյան այլ իշխանական փոխերի²²։ Բայց այս փաստին ավելի մանրամասնորեն կանդրադառնանք ստորև։

ձեռքակալելն Արաբական խալիֆայթի հետ ունեցած հարաբերության մասին։ Ըստ այսմ, Սահլ իբն Սինբարը «սպարամբեց Նայդար իբն Քաուս ալ-Աֆշինի նշանակած կառավարչի դեմ, սպանեց նրա քարտուղարին, իսկ ինքը հազիվ հոգին ազարեց փախուստով» («Արաբ մարենագիրներ», էջ 281)։ Ամենայն հավանականությամբ, Բաբելին ձեռքակալելով Սահլը փորձում էր թափել Սաջյան ամիրաների դեմ գործած անհնազանդության իր մեղքը։ Արաբ մեկ այլ մարենագիր՝ Յակուբին իր նշանավոր Տարիխում (Պարմություն) Սահլի սպարամբությունը դնում է Բաբելին ձեռքակալելուց հետո (սնդ, էջ 387-388)։

14 Տե՛ս «Արաբացի մարենագիրներ Նայասարանի մասին», էջ 92 :

15 Անդ։ Տե՛ս նաև C. Zuckerman, *ևճ. աշխ.*, էջ 566:

16 ՊԱ, էջ 330:

17 Անդ, էջ 331:

18 Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», հր. Ե, խմբ. Ա. Գ. Բարխուդարյան, Երևան, 1982, էջ 12:

19 «Բագրատունիների փառքը», էջ 510:

20 Տե՛ս Կ. Կոստանյան, Վիմական փարեգիր. ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց Նայոց, «Bibliotheca Armeno-Georgica II», Ս. Պետերբուրգ, 1913, էջ 6:

21 Անդ, էջ 2:

22 Տե՛ս Ռ. Մաթևոսյան, Բագրատունյաց Նայասարանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, Երևան, 1990, էջ 47-86:

Այսպիսով, հաշվի առնելով *իշխան*²³ և *տէրանց տէր* փառաբանումների միջև առկա սպորադատության փաստը, կարող ենք ենթադրել, որ Դասխուրանցու վկայությունը (838/839 թ.), որ ավելի վաղ շրջանի է, քան Սուրբ Նազարի վանքի արձանագրությունը (853/854 թ.), վերաբերում է այն պատմական փաստին, որ 838/839 թ. Սահլը, լինելով Նայաստանի, Աղվանքի և Վրաստանի իշխան, իր որդուն՝ Նովհաննես-Մուավիային, ընդունված քոհմական սովորության համաձայն, փոխանցում է *տէրանց տէր* փառաբանումը: Այնուհետև, 853/855 թթ. Բուղայի կողմից գերեվարվելով՝ քիչ անց Մուավիա բնի Սահլ բնի Սմբատը, այսինքն՝ Նովհաննես-Մուավիան²⁴, աքաղաղվելով²⁵ և հոր մահվամբ Աղվանից պանն ընդունված իշխանական կարգի համաձայն հաջորդում է հորն ու դառնում Նայոց, Վրաց և Աղվանից իշխան²⁶: Սակայն Դասխուրանցին բացահայտորեն չափազանցում է Աղվանից իշխանի ունեցած գործառնությունն ու դերը: Նախ և, որ Սահլին ենթակա պարածքն Աղվանք-Առանն էր, և, ուստի նրա իշխանությունը տարածվում էր միայն ու միայն հիշյալ տարածաշրջանի վրա²⁷: Ներկայումս, պետք է թերևս Դասխուրանցու վկայությունը բացարձակ իր պատմաաշխարհագրական համարեցություն²⁸, այսինքն՝ այդ ժամանակաշրջանում Աղվանքն ընդգրկում էր երեք՝ մեկը մյուսից տարբեր ազգային-վարչական տարածքներ²⁹: Արևմտյան մասերը պատկանում էին Վրաստանին, կենտրոնական մասն ընդգրկում էր Բուն Աղվանքը, վերջապես երրորդ մասը հայտնի էր իբրև Նայոց Աղվանք³⁰:

23 «Իշխան հայոց» փառաբանության պատմական նշանակության մասին տես **A. Ter-Ghevondian**, Le «Prince d'Arménie, à l'époque de la domination arabe», «Նովհաննեսի ժողովածու», Երևան, 2003, էջ 141-156:

24 Տես **Al-Tabari**, III, էջ 1416:

25 Ըստ Ա. Տեր-Ղևոնդյանի («Notes sur le Šak'e-Kambečan I^{er}-XIV^e ss.», «Նովհաննեսի ժողովածու», էջ 674)՝ Նովհաննես-Մուավիան սպանվել է Սամառայում:

26 Տես **C. Zuckerman**, նշ. աշխ., էջ 566-567:

27 Անդ:

28 Միևնույն ժամանակ չենք կարող անընդունաբար Դասխուրանցու դիմապատկերները՝ *իշխանաց իշխան* փառաբանումը Աղվանք ներմուծելու և այդպիսով այդ թագավորությունն էլ դասելու Բագրատունյաց Մեծ Նայքի թագավորության կողքին մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ փառաբանումն սկսել էր կիրառության մեջ միայն նախնական Նայաստանում:

29 Տես **А. Акопян**, Албания-Алуанк в греко-латинских и средневековых армянских источниках, Ереван, 1987, էջ 109-124, **Ս. Բարխուդարյան**, նշ. աշխ., էջ 63:

30 Անդ: Միևնույն դիմապատկեր 950-1050 թթ. Աղվանքը բաժանված էր երեք մասի՝ Առան՝ Կուրից հարավ, Շիրվան՝ Կուրից հյուսիս և ալ-Բար՝ Դերբենդ քաղաքն իր մերձակայքով (նշ. աշխ., էջ 38): «Աշխարհացոյց»-ը խոսում է «Բուն Աղուանք»-ի մասին, որ «ընդ մեջ է մեծի գետոյս Կուրայ և Կովկաս լեռնին», տես **Ս. Երևնյան**, Նայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի: Փորձ VII դարի Նայիկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա, Երևան, 1963, էջ 105: «Աշխարհացոյց»-ի այս վկայությունը վերաբերում է մինչև 387թ. Աղվանական թագավորության սահմաններին՝ Կոպաղակ մայրաքաղաքով (նշ. աշխ., էջ 34): Ե դարի երկրորդ կեսին Աղվանից մարզպանությունն ընդգրկում էր 11 գավառ՝ Բուն Աղուանք, Արցախ, Ուրիք, Ռուբրտակ, Բազկան/Ներան, Դարբանդ, Թաուսպարք, Ղեկք, Չոդա, Շրուան և Խսրուան, 72,204 կմ² ընդհանուր տարածքով: «Բուն աշխարհի Աղուանից»-ն իր հիմնական սահմանների մեջ (շուրջ 23000 կմ²) կարող էր համապատասխանել Շարն-Կամբեջան-Ներքինի թագավորության սահմաններին: Կարենոս է, որ Շարք և Կամբեջան գավառները նույնպես մտնում էին Բուն Աղվանքի կազմում (նշ. աշխ., էջ 120): Միևնույն ժամանակ, սակայն, քննությունն ցի բռնում, որովհետև 950-ական թվականներին Կուրից հյուսիս ընկած տարածքը չէր կարող ընդգրկված լինել Շրուան կամ Շիրվան իշխանության մեջ մի պարզ պարզաբանով. այնքան դեռևս իշխում էին Սահլ Սմբատեանի հաջորդները: Միևնույն ժամանակ Շիրվան տարածքը համապատասխանում է բուն Աղվանքից արևելք ընկած Մերձկասպյան տարածքներին, որոնց մեջ մտնում էին Աղվանից Բազկան, Խսրովան, Շրվան/Շիրվան և Չոդ գավառները: Դարբանդ քաղաքն իր մերձակայքով ընդգրկում էր Թավադապարք և Ղեկք գավառները: Արցախ, Ուրիք և Ռուբրտակ գավառները մտնում էին 387թ. Մեծ Նայքից հանված և Աղվանքին կցված հողերի մեջ՝ հաճախ կրելով «Նայոց Աղվանք» անունը, տես **J. Marquart**, *Eränsäht nach der Geographie des Ps. Moses Xorenac'i*, mit historisch-kritischen Kommentar und historischen und topographischen Exkursen, Berlin 1901, էջ 118:

Այս իմաստով հասկանալի է դառնում նաև մի քանի «իշխանաց իշխան»-երի առկայությունն Աղվանքում և նույնիսկ Անդրկովկասում:

Նովհաննես-Մուավիայի կապը Նամանի հետ առավել առը և փշուր մի հարց է՝ կարո՞ւյ նորանոր լուսաբանումների: Մի քանի ուսումնասիրողներ փորձել են, պարզապես վկայությունների կամայական փոփոխությանց հաշվին, հարցին լուծում տալ³¹՝ բանավոր-խելով Թովմա Արծրունու «Նայոց Պարմութեան» այն դրվագը, որտեղ ներկայացվում են Բուդայի կողմից գերեվարված իշխանների անունները³²: Թովման թվարկում է գերեվարված իշխանների անունները հետևյալ կարգով. «...տե՛ր Սմբատ սպարապետ Նայոց, և Գրիգոր Քուրդկայ որդի Մամիկոնեից տե՛ր, և Արրներսեհ Աղուանից իշխան, և Գրիգոր Սիւնեաց տե՛ր, և Մահլ³³ Սմբատայ որդի Շաքեյ տե՛ր, որ գԲաբանն (իմա Բաբեկ) կալաւ»³⁴: Նովհաննեսի չի թվում, որ Մահլը նույնպես գերեվարված իշխանների թվում էր. Սուրբ Նահոր վանքի վիմագիր վկայությունը հստակորեն նշում է, որ 853/854 թթ. արդեն Աղվանից իշխան էր Նովհաննես-Մուավիան՝ փոխարինելով հորը: Իսկ գահի փոխանցում կարող էր արձանագրվել միայն Մահլի մահվան կամ անհույս բացակայության դեպքում: Թովմա Արծրունու պահպանած ցուցակը, հետևաբար, կարո՞ւյ է պարմագրական ճշգրտումների և սրբագրումների ու չի կարող այս առումով հուսալի կոման դառնալ, մանավանդ որ նորանոր շփոթություններ են ի հայտ գալիս Սյունյաց իշխանների անունների բացահայտման պարագային³⁵:

Նովհաննեսի և Նամանի անձերի շփոթությունը հիմնվում է Միխիթար Այրիվանեցու մի վկայության³⁶, ինչպես նաև Ա. Մուսաղանյանի կողմից վերհանված մի քանի ձեռագիր պեղեկությունների վրա³⁷: Նայ միջնադարյան գրականության մեջ ուրիշ որևէ տեղ Նամանը չի ներկայանում Նովհաննես անունով, ինչպես այս երեք վկայություններում: ՄՄ Ն^մ 2152 ձեռագրում՝ ԺԵ դ., էջ 210ա, հարց-պատասխանի ձևով գրված հարվածում Նամանը նույնացվում է Բագրատունյաց Նովհաննես իմաստասերին. «[Նարց]-Ո՛վ է Նաման՝ Առակաց մեկնիչն: [Պարասխան]- Բագրատունեաց իմաստասեր արեղա Յոհաննես անուն: [Նարց]- Զինչ արարեալ: [Պարասխան]- Զվերջին գորոջայքս նա է կարգել ի Սաղմոսին վերայ և

31 Տե՛ն Ա. Նովորենան, Խաչեն-Խոխանաբերդը և նրա իշխանությունը 9-13-րդ դդ., էջ 79-82: Ըստ ուսումնասիրողի՝ Թովմայի բնագրում առկա է մի «պեխնիկական» շփոթություն, այսինքն՝ իրականում Թովմայի բնագրում պետք է լինի ոչ թե *Շաքե*, այլ *Խաչեն*: Սակայն նմանապիպ եզրակացության համար պակասում են հնագրական և ձեռագիր հիմքերն ու վկայությունները:

32 Տե՛ն «Պարմութիւն Տանն Արծրունեաց» (Պարմութիւն Արծրունեաց), քնն. բնագիր, ներածություն և ծնթ. Մ. Ն. Դարբինյան-Մելիքյան, Երևան, 2006, էջ 213:

33 Նարց է նշել, որ Թովմա Արծրունու բնագրի հրապարակի դիպարվման համաձայն՝ «Մահլ»-ի փոխարեն բոլոր ձեռագիր և տպագիր օրինակներում առկա է «Մահլ» ձևը, տե՛ն անդ, էջ 241:

34 Տե՛ն «Պարմութիւն Արծրունեաց», էջ 213:

35 Ըստ Թովմայի՝ Բուդան Սմբատի որդի Մահլին՝ Շաքեի իշխանին, գերեվարել և տարել է Մամառա, ինչը չի համապատասխանում պարմական ճշմարտությանը: ալ-Տաբարին մյուս իշխանների շարքին Աղվանից կողմից նշում է միայն Նովհաննես-Մուավիայի անունը. «Բուդան իր հետ տարավ նաև Աբու-լ Աբբաս Վարդին, որի անունն է Սմբատ բնն Աշուր, և նրա հետ՝ Առանի իշխան Մուավիա բնն Մահլ բնն Սմբատին և Արրներսեհ բնն Բահալ Խաչենցուն», թրգմն. ըստ J. Laurent-M. Canard, L'Arménie entre Byzance et l'Islam depuis la conquête arabe jusqu'en 886, Lisbonne 1980, էջ 643:

36 «Պարմութիւն Նայոց», հրտ. Մ. Էմին, Մոսկուա, 1860, էջ 55 :

37 «Աղվանից գրականության հարցերի շուրջ», Երևան, 1966, էջ 184-204: Տե՛ն նաև ռուսերեն թարգմանությունը՝ «О литературе Кавказской Албании», Ереван, 1969, էջ 143-163: Գրախոսության համար տե՛ն H. Anassian, Une mise au point relative à l'Albanie Caucasienn. "Revue des Études Arméniennes" VI (1969), էջ 290-333:

գ-Քերական մեկնեալ»³⁸: ՏՊ 5128 ձեռագիրն ավելի հեռուն է գնում՝ Նամամ-Նովհաննեսին րալով Աշուր Ա թագավորին (885-890) օժեկու և օրհնելու գործառույթը³⁹: Այսու, վկայություններն ի մի բերելով, կարող ենք ենթադրել, որ կամ Նովհաննես-Մուավիան, իբրև հրավիրյալ իշխան, մասնակցել է Աշուր Ա-ի թագադրման և օժման արարողությանը, կամ էլ Նամամ-Արեւելցին, ըստ Մովսես Դասխուրանցու, Աշուր Ա-ի օրինակով վերահասարակել է Աղվանից թագավորությունը և ինքն էլ մեծապես օժանդակել Բագրատունյաց թագավորական հարստության հաստատմանը Բուն Նայասրանում⁴⁰: Սակայն Աշուրի թագադրման արարողությունը րելի է ունեցել 882-885 թթ.⁴¹, ինչը բացառում է Նովհաննես-Մուավիայի մասնակցությունն Աշուրի թագադրությանը՝ հաշվի առնելով Նովհաննես-Մուավիայի գահակալության (853-854) և Աշուրի թագադրման թվականների միջև առկա բավական երկար ժամանակամիջոցը⁴²: Ավելին, Դասխուրանցու կողմից հարմարեցված համաժամանակայնությունը կարարելապես համահունչ է նրա՝ Բագրատունյաց Նայասրանի հզորացմանը զուգահեռ Աղվանից թագավորության վերածնունդի դրվագները ներկայացնելու դիպավորությանը⁴³: Նովհաննես Դրասխանակերպցին, ընդգծելով Գեորգ Կաթողիկոսի փրկագնման գործում Նամամի բացառիկ դերը, նրան անվանում է «Մեծ իշխան Արեւելից կողմանց»⁴⁴, ինչը, անկասկած, նշանակում է, որ Նամամի թագադրումը հաջորդում է Գեորգ Կաթողիկոսի փրկագնմանը՝ հավանաբար 894 թվականի վերջին կամ 895 թվականի սկզբին⁴⁵: Այսպիսով, Աղվանից պարմության թարերաբեմի վրա 853/854-894/895 թթ. միջև կարելի է բավարար հստակությամբ առանձնացնել երկու իրարից րարբեր պարմական անձերի՝ Նովհաննես-Մուավիային՝ Աղվանք-Առանի իշխան, և Նամամ Արեւելցուն՝ Մեծ իշխան, այնուհետև Աղվանքի թագավորության վերականգնող և թագավոր:

Վերջապես, անհրաժեշտ ենք համարում անդրադառնալու այսրել մի քանի վկայությունների, որոնք բոլորն էլ աղերսվում են Նամամի կյանքում կարարված ողբերգական իրադարձության՝ սեփական եղբոր սպանության վարկածի հեր: Խոսքը մասնավորապես մի դամբանագրի մասին է՝ հայրնաբերված նախկին խորհրդային Ադրբեջանի րարածքում (Սոֆուլու գյուղի մոտակայքում): Ս. Բարխուդարյանը, վերծանելով հանդերձ դամբանագիրը, մի քանի էական շեշտադրումներ է կարարել դամբանագրում առկա *իշխան* և *րել* րիպոդոսների վերաբերյալ⁴⁶: Սրորև ներկայացնում ենք Ս. Բարխուդարյանի առաջարկած վերծանությունը.

«1. Այս դիր դամբանի... եղբար Նամամ իշխանի

1. Եւ ր[եառ]ն Փղիպէի և ր[եառ]ն Սնրարա... գրկեալ ... *դի Նամամս իշխանի*

38 Նմմր. Ա. Մնացականյան, նշ. աշխ., էջ 185, «Մայր Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մարենադարանի», հր. Ա. կազմ. Օ. Եզանյան, Ա. Զեյթունյան, Փ. Այնթափյան, Երևան, 1965, էջ 734 :

39 «Մայր Յուցակ», էջ 40, Ա. Մնացականյան, անդ: Ձեռագրի վկայությունն անկասկած սխալ է, քանի որ Նովհաննես Դրասխանակերպցի Կաթողիկոսը հարակ նշում է Գեորգ Բ Գառնեցու անունը՝ իբրև Աշուր Ա թագավորի օժման արարողությունը նախագահող Կաթողիկոս («Պարմութիւն Նայոց», էջ 139):

40 ՊԱ, էջ 335:

41 Տեն J. Laurent-M. Canard, նշ. աշխ., էջ 323:

42 Տեն Ա. Յակոբյան, Խաչեն-Խոխանաբերդը, էջ 80:

43 Տեն А. Акопян, նշ. աշխ., էջ 263:

44 «Պարմութիւն Նայոց», էջ 170:

45 Տեն С. Zuckerman, նշ. աշխ., էջ 568:

46 Տեն «Տապանագիր Նամամ իշխանի անունով», «Տեղեկագիր Նաս. Գիտությունների» (1964). թ. 1, էջ 63:

2. Ի ճորսը հասակե երա յաշխարհէս, դառն թողի սուգ՝ զգիրս գայս
3. Մի ոք իշխեսցէ մերձենալ ի սմա նզովեալ եղիցի ի Բ[րիսպոս]է Ա[ստուծոյ]»:

Ըստ Ս. Բարխուդարյանի՝ դամբանագիրը նվիրված է Նամամի կրպսեր եղբորը, որն սպանվել է արաբ բռնավորի դողմամբ ևս Նամամի ձեռքով: Մահապարտի մասին են վկայում նաև 4-րդ պոդում արձանագրված խոսքերը՝ իրենց առանձնահատուկ արգելական շեշտադրումով⁴⁷: Մեզ է հասել նաև անվավեր մի շարական՝ նույնպես վերագրված Նամամին (այդ մասին է վկայում նաև շարականի ծայրակապը՝ Նամամ), որտեղ շարականի հեղինակ համարվող Նամամը գոջում ևս ապաշխարում է սեփական եղբոր արյունը թափելու համար⁴⁸: Նամամի կյանքի այս կարևոր պատումը, հիմնված վերոնշյալ երկու վկայությունների վրա, ենթադրաբար ներկայացնում է նրա կյանքի հետագա մանրամասները: Ըստ այսմ՝ Նամամը, գոջավով ևս ապաշխարելով, ընդունում է վանական սքեմ՝ Նովիաննես անունով, և կյանքի մնացած մասն անցկացնում վանքում⁴⁹: Չբացառելով հանդերձ սույն պետության հնարավոր ճշմարտացիությունը՝ այնուամենայնիվ, հարկ ենք համարում ներկայացնելու նաև դամբանագրի՝ Ա. Շահինյանի կողմից առաջարկված մեկ այլ ընթերցում⁵⁰: Շահինյանի լուսանկարում դամբանագրի երկրորդ պոդն ավելի հստակ է. «...դի Նամամա իշխանի»: Նկարաբար ավելի հավանական է դամբանագիրը վերագրել ոչ թե Նամամի կրպսեր եղբորը, այլ որդուն⁵¹: Սրբուհի ներկայացնում ենք Ա. Շահինյանի առաջարկված վերծանությունն ամբողջությամբ.

1. Այս դիր...պան-կա-հ...դին [Նամամ իշխանի (ընդգծումը մերն է-Շ. Ա.)
2. Եւ րն Փղիպեի և րն Պեքրոսա, [թոռին Դ-աթա] ցաւաբ վիրավոր ևս գրկ-
3. եալ ի ճորսը հասակէ՝ երա յաշխարհէս: Եւ ոք ընթերնուր զգիրս գայս,
4. մի ոք իշխեսցէ մերձենալ ի սա, նզովեալ եղիցի ի Բէ ԱՅ⁵²:

Նամամի եղբոր ինքնությունը, սակայն, մնում է անհայտ՝ հակառակ առաջ քաշված պետություններին⁵³: Այնուամենայնիվ, վերոնշյալ շարականը թերևս միակ երկն է, որ կարելի է առավել կամ պակաս չափով վերագրել Աղվանքի մեծ իշխան-թագավորին՝ իբրև քաղաքական դավադրությունների արդյունքում կապարված եղբայրասպան արաբ ևս դրանից բխող գոջման արքայապետություն⁵⁴: Իբրև Նամամի պատմական ինքնության մասին վկայող մեկ այլ պեղեկություն կարող է թերևս դիտարկվել Ս. Բարխուդարյանի՝ Արցա-

47 Անդ:

48 Տե՛ս Սահակ Ամարունի, Նին եւ նոր պարականոն կամանվաւեր շարականներ, Վաղարշապատ, 1911, էջ 163-164:

49 Տե՛ս Ա. Մնացականյան, նշ. աշխ., էջ 190:

50 Տե՛ս Ա. Շահինյան, Բարվի քաղաքային թանգարանի հայերեն արձանագրությունները. «Լրաբեր հաս. գիտությունների», (1976), 6, էջ 91-92. հմմտ. նաև «Դիվան հայ վիմագրության», հր. Ե (Արցախ), էջ 136, Ն⁴⁰ 454:

51 Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ, ըստ Դասխուրանցու, Նամամն է սպանել իր կրպսեր եղբորը (ԴԱ, էջ 335-336):

52 Տե՛ս Ա. Շահինյան, նշվ. աշխ., էջ 91-92:

53 Բ. Ուրուբաբյանը (նշ. աշխ., էջ 75-76), հղելով Դասխուրանցու վկայությունը (ԴԱ, էջ 341), կարծում է, որ Նամամ Արեւելցիի նույն Նամամ-Գրիգոր Խաչենի իշխանն է, իսկ Նամամ անունն էլ «Գրիգոր»-ի արաբերեն թարգմանությունն է: Մակայն «Նամամ» անունը վկայված է նաև Ղևոնդի «Պարմութեան» մեջ ու Թովմա Արծրունու երկում ևս նշանակում է «աղավկի, փափրակ», փես «Hamam; Commentary on the Book of Proverbs», ed. and tr. by R. W. Thomson, Petters 2005, էջ 1-2: Թովմոսի այս մեկնությունը կարող է թերևս հաստատվել ՄՄ Ն⁴⁰ 511 ձեռագրում (էջ 51 ք) առկա ոմն *հոռու* Նամարիոս/Նոմորիոս վարդապետի՝ Փյունիկ (թոջուն) անվան նույնացմամբ:

54 Տե՛ս C. Zuckerman, նշ. աշխ., էջ 563:

խի Ավերաբանոց (նախկին՝ Չանախչի) գյուղում հայտնաբերված փապանագիրը⁵⁵։ Գյուղը գտնվում է Սղնախի և Թողի միջև, Սյունիական կերպից հարավ, և եղել է Մելիք-Շահնազարյանների փոխյոթների կենտրոններից մեկը⁵⁶։ Ըստ Մ. Բարխուդարյանի՝ փապանագիրը գտնվում է Շահնազարյան փոխմի մելիքների դամբարանից հյուսիս, կոթ մեջքով՝ աջ կողմում թագավորի պարկերով՝ ձի հեծած և խաչը ձեռքին։ Պարկերի երկրորդ կերպարն է երախը լայն բացած մի վիշապ, որը հերապնդում է թագավորին։ Տապանաքարի մյուս երեսը խաչագարդ է՝ դժվարընթեռնելի հերեյայ արձանագրությամբ, որը մեջբերում ենք ըստ Մ. Բարխուդարյանի վերծանության. «ի ՈՂ (1241/1242). ննճեց **Նա...թգաորի Աղվց...** (ընգծումը մերն է-Շ.Ա.) ևս րէր Մասուն գրեցիք, այս ով որ կարդէ. Աստուած ողորմի ասէ։ Այս է հանգիստ Մուրադի Ղաթիոնա գաջի (հավանաբար՝ քաջի-Շ.Ա.) Իարանդայ գավառ հմուրոյն ասպրաբերի»։ Տապանաքարի մոտ առկա է նաև մեկ այլ դամբարանաքար՝ թագուհու պարկերով, սակայն առանց արձանագրության⁵⁷։ Արձանագրության ընդգծված բառերը հավանաբար վերաբերում են Աղվանից Նաման թագավորին, որի դամբարանը, ինչպես ենթադրում է Ս. Բարխուդարյանը, վերանորոգել է Մասուն իշխանը⁵⁸։ Ասվածը կարելի է հաստատել այն պարզ փաստով, որ 1241/1242 թթ. փարածաշրջանում այլևս չկար թագավորի փոխոյոթ կոթ ունենալ հայագի փոխակալ, որով և ընդգծված բառերը վստահաբար վերաբերում են ավելի վաղ ժամանակաշրջանի։ Սակայն ինչպես ինքը՝ Ս. Բարխուդարյանն է նշում⁵⁹, հիշյալ դամբարանաքարի գիտական և հնագիտական վավերականությունը ժխտող կամ հաստատող ենթադրություն անելն այսօր անհնար է՝ փապանաքարի կորսված լինելու պարզաբանով⁶⁰։

Չնայած Ա. Մնացականյանի բուռն ցանկությանը⁶¹՝ ձեռքի փակ եղած սկզբնաղբյուրների մեծ մասը հերքում են Նաման Արեւելցի թագավորի և Նաման մարենագրի անձերի նույնականացումը։ Միևիթա Արիվանեցին, հաստատելով Նաման մարենագրի Բագրատունի ծագումը, չի նշում, սակայն, նրա արքայական իշխանության մասին⁶²։ ՄՄ ՏՊ 2152 և 5128 ձեռագրերը ոչ մի ակնարկ չունեն Նաման թագավորի անձին՝ փոխադրելով նրան ավելի շուրջ Բագրատունյաց Նայասարանի նշանավոր վարդապետների շարքում։ Այս դիտարկումը հաստատվում է նաև մեկ այլ ձեռագիր վկայությամբ. Երուսաղեմի ՏՊ 1455 ձեռագրի հիշարակարանում գրված է. «Թագաորէ Նայոց Աշոտ ամս Ե։ Նայ թ/ականն ՅԼԶ (886)։ Ի սմա աուրս Իսահակ և Նաման վարդապետք, որ գառակսն և զող[բ]սն և զարհնութիւնսն, որ ի գլուխ կանոնացն է, և զամբիւսն գիրք մի, և զքերականն գրեցին ի Նոգույն Սրբոյ փեսայութենէ»⁶³։ Անշուշտ, Նաման թագավորը ոչ մի կերպ չէր կարող վար-

55 Տե՛ս Մ. Բարխուդարյան, Արցախ, Բաքու, 1895, էջ 98։

56 Տե՛ս R. Hewsen, A Historical Atlas of Armenia, Press of Chicago University, 2001, էջ 164։

57 Տե՛ս Մ. Բարխուդարյան, նշ. աշխ., էջ 98։

58 Տե՛ս Մ. Բարխուդարյան, նշ. աշխ., էջ 62, ծմբ. 7։

59 Անդ։

60 Ըստ Մ. Բարխուդարյանի (նշ. աշխ., էջ 62, ծմբ. 7)՝ 1961 թ. այդ նպատակով Ավերաբանոց գյուղ ուղարկված վիճակագրական արշավախմբին չհաջողվեց գտնել փապանաքարերը, դրանք, ամենայն հավանականությամբ, արդեն ոչնչացվել էին։

61 Տե՛ս Ա. Մնացականյան, նշ. աշխ., էջ 190-191, հմմտ. նաև Կ. Կոստանեանց, Նաման Արեւելցի, Վաղարշապատ, 1896։

62 «Պարամութին Նայոց», էջ 86։

63 Գ. Յովսէփեանց, Յիշարակարանը ձեռագրաց, հր. Ա. Անթիլիաս, 1951, էջ 87-88։

դապևր լինել, ինչն անհրաժեշտաբար պիտի ենթադրեր որոշակի եկեղեցական աստիճանի կամ պարտապարտության առկայություն: Ավելին, Ստեփանոս Տառնեցի Առողիկը, որ մեկ դար հետո խոսում է թագավորի և մարտնչի մասին առանձին-առանձին, ոչինչ չի ասում դրանց միջև առկա կապի վերաբերյալ⁶⁴: Նմարավոր է, ուրեմն, որ հետագայի մեր մարտնչիները շփոթել են այս երկու բոլորովին տարբեր պարմական անձերին՝ հաշվի առնելով նրանց երկուսի բարեկարգչական և քաղաքական ձեռնարկները Նյուսխային Նայաստանում և Աղվանքում: Այս վերջին դիտարկմանն ուղղակիորեն առնչվում է նաև Նամամի դինաստիական ծագման հարցը: Վերը տեսանք, որ ՄՄ ՆՊ 2152 ձեռագիրը և Մխիթար Այրիվանեցու ժամանակագրությունը Նամամիի դիտում են իբրև Բագրատունյաց հարստության ներկայացուցիչ: Բագրատունիների ներկայությունը Կենտրոնական Աղվանքում՝ իբրև իշխանական առանձին տուն, ըստ Վրաց պարմության⁶⁵, թվագրվում է Է դարով, երբ Ադրնաս կամ Արրներսեհ իշխանը⁶⁶, հալածվելով անհավաքներից, հանգրվանում է վրաց Արջիլ թագավորի մոտ: Վերջինս Արրներսեհին կալվածքներ է տալիս Շաքե քաղաքի մերձակայքում⁶⁷: Վրաց պարմության մեջ մարտնչված երեք եղբայրները Տառնի Բագրատունիներից են: Մի քանի տարի անց նրանք հիմնում են Շաքեի իշխանությունը, որը վրաց աղբյուրներում հայտնի է *Ներթի* անունով⁶⁸: Նախապես Դասխուրանցու այն վկայությամբ, թե Սմբատի որդի Սահլ-Սահակը ծագում էր Աղվանքի բնիկ Առանշահիկ տոհմից՝ անհավանական է թվում, որ Առանշահիկները կարող էին այդքան երկար դիմանալ պարմության մարտահրավերներին և նույնիսկ մի որոշակի ժամանակաշրջանում վերականգնել թագավորական իրենց նախնիին փառքը Կենտրոնական Աղվանքում: Այստեղ չենք կարող անտեսել նաև Դասխուրանցու դիտարկությունը՝ Սահլին ներկայացնել իբրև բնիկ և օրինական տերն Աղվանքի իշխանական տան և հարստության⁶⁹: Ավելին, Սահլի և նրա հաջորդների կողմից օգտագործվող իշխանական փառքները՝ *տերսուց տեր* և *իշխանաց իշխան*, վկայում են Բագրատունյաց դինաստիայի հետ նրանց սերտ կապի մասին:

Նամամի հաջորդները. Նկարագր սկզբնաղբյուրները նշում են Նամամի որդու և թոռան անունները: Արրներսեհը՝ Նամամի որդին, մարտնչված է Անանիա Մոկացու (946-968) նամակներից մեկում՝ իբրև Նամամի որդի և Իշխանիկի հայր. «քանզի ունեք զաթոռ թագաորութեան յայնժամ Իշխանակ որդի տեան Արրներսեհի, թոռն երանելոյն Նամամայ բարեպաշտ թագաորին Աղուանից...»⁷⁰: Ըստ Վրաց արքայազն Վախուշտի

64 «Պարմութիւն Տիեզերական», Ս. Պետրքորեց, 1885, էջ 158-161: Առողիկի հիշարակած Իսահակ վարդապետը վարահաբար Սահակ Ապիկուրեշ կամ Մոռոթ կոչված հայրնի աստվածաբան-վարդապետն է, որի անունով մեզ է հասել Փոքր պարթիսարքի նամակի պատասխանը, տես «Գիրք թղթոց», Երուսաղեմ, 1993, էջ 524-539: Նամամի վերաբերյալ տեղեկությունը գրեթե նույնությամբ առկա է նաև Վարդան Արեւելցու երկում՝ «Պարմութիւն Տիեզերական», հր. Մ. Էմին, Մոսկոա, 1861, էջ 117:

65 «Քարթլիա Յիսուրեբայի կամ Վրաց պարմութեան հին թարգմանությունը» (Քարթլիա), վրացերեն բնագիրը և գրաբար թարգմանությունը, ներածությունը և բառարանը՝ Ի. Աբովադեի, Թբիլիսի, 1953, էջ 198:

66 Ադրնեսը վերջինիս նույնացնում է Աշոտ Կույր Բագրատունու (†762)՝ Աշոտ Մսակերի (†826) պապի հետ («Բագրատունիներու փառքը», էջ 509): Նմտ. նաև Վարդան Արեւելցու վկայությունը՝ «Պարմութիւն Տիեզերական», էջ 103, 112-113:

67 Տես «Քարթլիա», էջ 199:

68 Տես Ն. Ադոնց, նշ. աշխ., էջ 510-513, Ա. Եղիազարեան, նշ. աշխ., էջ 140-142:

69 Տես Ա. Եղիազարեան, նշ. աշխ., էջ 150:

70 «Մարտնչից Նայոց», հր. Ժ, էջ 258:

Բագրատիների հեղինակած «Կախերթի և Ներթի պարմության»⁷¹, որն ընդգրկում է ժամանակագրական բավական ծավալուն մի շրջան (687-1744), Արքունիքի կնոջ անունը Դինար է, ով Աջարիայի և Ղուկիի իշխանաց իշխան Գուրգենի (896-941)⁷² քույրն է: 918 թ. այս Դինարը, ըստ Բագրատիների պարմության, Ներթի իշխանության բնակիչներին հերձվածից, այսինքն՝ Նայ Եկեղեցու դավանանքից, դարձնում է ուղղափառության՝ քաղկեդոնականության՝ դրանով վերոհիշյալ փարածքները մարցնելով Վրաց Եկեղեցու կանոնական իշխանության փակ⁷³: Արքունիքսեին ժամանակակից Նովհանուս Կաթողիկոս Դրասխանակերպցին, խուսափելով Արքայապահանի Սաջյան Յուսուֆ ամիրայի հեփապնդումներից, որի մոտ մի որոշ ժամանակ պարանդ էր եղել, այլ իշխանների թվում, ում մոտ հանգրվանել էր իր դեգերումների ժամանակ, նշում է նաև Աղվանքի թագավոր Արքունիքսեի անունը, ով հյուրընկալել էր Կաթողիկոսին 908 թվականի վերջին⁷⁴: 915 թ. Կախերթի իշխան Կյուրիկեն († 918) և Աբխազիայի Կոնստանդին թագավորը († 920) պաշարում են Շաքե-Ներթի Վեղջին քաղաքը⁷⁵: Արքունիքսեին ստիպված նրանց է զիջում մի քանի սահմանամերձ ամրոցներ, ընդ որում նաև Գավազնի քաղաքը՝ ներկայիս Թեկավիի մերձակայքում (Վրաստանի Նանրապետություն)⁷⁶: Վերջապես արաբ մարենագիր ալ-Մասուդին նշում է Արքունիքսեի բնի Նամամի անունը՝ իբրև շաքեցիների թագավոր⁷⁷: Սա Արքունիքսեի անունն արձարձող վերջին թվականն է: Մարգուրան ամիրայի հարկատուների ցուցակում (սկսած 955/956 թթ.)՝ պահպանված Իբն Նաուկալի «Երկրի պարկերը» աշխարհագրական երկում⁷⁸, Շաքեի թագավորն արդեն Իշխանիկն է, որին արաբ մարենագիրն անվանում է Աբու-Աբդ-ա-լ Մալիք⁷⁹: Վախուշտի Բագրատիների ժամանակագրությունը հարակորեն նշում է, որ այն ժամանակ, երբ Դինար թագուհին Շաքիի բնակչությանը քաղկեդոնական դարձրեց, սալարյաններն արդեն պաշարել էին Բարդա/Պարպավը և ներխուժել Ադրբեջան⁸⁰: Սալարյանների արշավանքը թվագրվում է 942/943 թթ.⁸¹, որով և Արքունիքսեի մահը կարող ենք դնել 942/943-955/956 թվականների միջև:

Մարգուրանի հարկատուների ցուցակում Իշխանիկի անունը դրված է Շիրվանշահի անունից անմիջապես հետո, ինչը խոսում է, չնայած անուղղակիորեն, ցուցակի մեջ դրված անձանց նվիրապետական հերթականության մասին: Ամենայն հավանականությամբ, արդեն Արքունիքսեի թագավորության վերջին տարիներին քաղկեդոնական դավանանքին հարողներն այնքան էին հզորացել Շաքե-Ներթում, որ վրաց ժամանակագրությունը քաղ-

71 Տե՛ս **Լ. Մելիքսեթ-Քեյ**, Վրաց աղբյուրները Նայսաբանի և հայերի մասին (Վրաց աղբյուրներ), հր. Գ. Երևան, 1955, էջ 67:

72 Տե՛ս **Ն. Ադոնց**, նշ. աշխ., էջ 513:

73 Տե՛ս «Վրաց աղբյուրներ», էջ 39-40, 67, հմմտ. նաև «Քարթլիս», էջ 218:

74 «Պարմություն Նայոց», էջ 217:

75 Տե՛ս **M. Brosset**, Histoire de la Georgie, St. Petersburg 1858, vol. I, էջ 279:

76 Անդ, էջ 277-278:

77 Տե՛ս «Արաբ մարենագիրներ, Թ-Ժ դարեր», էջ 641-642:

78 Անդ:


79 Անդ:

80 Տե՛ս Վրաց աղբյուրներ, էջ 40: Ըստ Ա. Եղիազարյանի (նշ. աշխ., էջ 158)՝ Դինար անունով երկու վրաց արքայադուստր կար՝ մեկը՝ Արքունիքսեի կինը և վրաց իշխանաց իշխան Գուրգենի քույրը, իսկ մյուսը՝ Իշխանիկի կինը և Գուրգենի դուստրը: Ներազայի վրացական սկզբնաղբյուրներում այս երկու արքայադուստրերը նույնացվել են:

81 Տե՛ս **A. Ter-Ghewondian**, The Arab Emirates in Bagratid Armenia, trad. N. G. Garsoian, Lisbonne 1976, էջ 93-94:

կեղոնականների հաղթանակը թվագրում է 918 թվականով: Անանիա Կաթողիկոսի միջամտությունը չի վերաբերում Նյուսիսայի Աղվանքին, քանի որ այդ շրջանի թագավորական ընտանիքի կամ եկեղեցական նվիրապետության ներկայացուցիչների բացակայությունը 949 թ. գումարված եկեղեցական ժողովին խոսում է Անանիա Կաթողիկոսի հեղինակությունը չճանաչելու և դրանով Ներեթիի եկեղեցու ներքին գործերին կաթողիկոսական միջամտությունը չհզոքացնելու Իշխանիկի դիպավորության մասին⁸²: Այսպիսով, Նամամի թողը՝ Իշխանիկը, Շաբե-Ներեթիի վերջին թագավորն է, որ, ընդունելով Վրաց Եկեղեցու քաղկեդոնական դավանանքը, վերջնականապես կնքում է Նյուսիսային Աղվանքի թագավորության միացումը Վրաց թագավորությանը⁸³:

Շաբե-Ներեթի Աղվանից թագավորության
իշխանների և թագավորների սերնդաբանական սխեմա



82 Տե՛ս C. Zucermann, նշ. աշխ., էջ 577:

83 Տե՛ս Ն. Աղոնց, նշ. աշխ., էջ 514:

Բ. Նամամ մաքենագրի (Կեղծ Նամամի) երկերը

Նամամ թագավորի և մաքենագրի անձերի փառքերակումով որոշակի հստակություն կարելի է մրցնել նաև Նամամի անունով մեզ հասած երկերի հեղինակության հարցում: Այս առումով ավելի նպաստահարմար ենք գտնում Նամամ մաքենագրին պայմանականորեն ընդունել իբրև Կեղծ Նամամ՝ դրա փակ հասկանալով այն անանուն կամ միգուցե նույնանուն հեղինակին, որի բեղուն գրչի արդյունքն են Թ-Ժ դարերի հայ մաքենագրության մեջ իրենց ուրույն փեղն գրադեցնող աստվածաբանական-մեկնողական, քերականական և ծիսական բնույթի երկերն ու ձեռնարկները:

Ծիսական բարեփոխումներ Սաղմոսաց գրքում. Կեղծ Նամամի իրականացած ծիսական բարեփոխման առաջին հիշարարությունը վկայված է Սյրեփանոս Ասողիկ Տարոնեցու և Մխիթար Այրիվանեցու երկերում: Ըստ Սյրեփանոս Ասողիկի՝ Նամամը մեկնել է Առակաց գիրքը և սահմանել Սաղմոսների վերջին գորդաները⁸⁴: Նույն փեղեկությունը կրկնում է նաև Այրիվանեցին⁸⁵: ՄՄ ՇՊ 5128 ձեռագրի փեղեկությունն ավելի հստակ է ու մանրամասն: Այսպես «մարգարեից» արտահայտությունը մեզ մրածել է փալիս սաղմոսագրության մի շարք հին ձևի մասին, որով Սաղմոսներն ու մարգարեական օրհնությունները համարվում էին իբրև մեկ ծիսական գիրք: Մարգարեական օրհնություններն այն սուրբգրային հարվածներն են, որոնք Վաղ եկեղեցում երգվում էին համայնական պաշարմունքի ժամանակ: Աստվածաշնչի հին ձեռագրերից միայն Ալեքսանդրյանն (Alexandrinus) է պահպանել այս կարգը՝ Ելից Ա 1-19, Երկր. Օրինաց ԼԲ 1-43, Ա Թագ. Բ 1-10, Ամբ. Գ 2-19, Ես. ԻԶ 9-20, Նովն. Բ 3-10, Դան. Գ 52-88, Ղուկ. Ա 46-55, 68-79, Ես. Ե 1-9, ԼԼ 10-20, Աղօթք Մանասէի (հմմտ. Բ Մնաց. ԼԳ 11-13), Աղօթք Սիմեոնի Ծերունույ (Ղուկ. Բ 29-32): Այսպիսով, ըստ ՄՄ ՇՊ 5128-ի՝ Կեղծ Նամամն ավելացնում է գուրդաների թիվը՝ հասցնելով 8-ի և յուրաքանչյուր գուրդայի վերջում հավելելով նաև մեկական մարգարեական օրհնություն: Ընդ որում, նմանափայ կառուցվածքը բնորոշ է հայերեն Աստվածաշնչի բազմաթիվ ձեռագրերի⁸⁶: Սաղմոսարանի նկարմամբ այս մասնավոր հեղափոխությունը կարելի է բացատրել մանկավարժական այն բացառիկ դերով, որ ունեցել է Սաղմոսարանը միջնադարյան Հայաստանում: Այս առումով ուշարժան է նաև Նովհաննես Դրասխանակերպցու վկայությունը Սողոմոն Մաքենյաց վարդապետի կրթական գործունեության վերաբերյալ. «...այլ և վարժեալ իսկ էր ի փիլիսոփայական արուեստս և առաւել ևս հմուտ լեալ *փսաղ-պութեան կրթանաց*»⁸⁷: Վերջին ընդգծված արտահայտությունը բացահայտորեն մարնանշում է Սողոմոնի՝ Սաղմոսարանի միջոցով կրթելու հմտությունը: Նմանա-

84 «Պարմութին փեղեկական», էջ 158-159:

85 «Պարմութին Նայոց», էջ 55:

86 Տե՛ս ՄՄ ձեռագիրը ՇՊ 142, 182, 188, 195, 353, 354, 2628, 4905 եւն, հմմտ. **Շահե Աճեմեան**, Մայր ցուցակ Աստվածաշունչի հայերեն ձեռագրաց, Լիսաբոն, 1992: Սաղմոսագրության այս ավանդությունն առկա է նաև փայագիր Սաղմոսարաններից շարքում. փեն **Նույնի**, Գիրք Սաղմոսաց Դատի ըստ 1868-ին Երուսաղեմի մեջ փայագրուած բնագրի, Երուսաղեմ, 1988, էջ 10-11:

87 «Պարմութին Նայոց», էջ 110:

տիպ կրթական կիրառության մեկ այլ ձև վկայված է նաև Մովսես Կաղանկար-վացու երկում՝ Վաչագան Ա Բարեպաշտ թագավորի կրթական-բարեկարգչական գործունեությունը նկարագրող դրվագում. «...գորողայաբար բակ առնալ բազմոթեանն յոյժ՝ եւ ոմանց գիրս, եւ ոմանց պնակիրս ի ձեռին ունելով, եւ միաբան առ հասարակ ամենեցուն մեծաձայն հրամայէր կարդալ»⁸⁸: Խոսքը շրջանաձև նստած եւ յուրաքանչյուր հարված կամ նախադասություն ուսուցչի հետեւից բարձրաձայն ընթերցելու եւ գոց սերտելու արվեստի մասին է, որը հայոց մեջ կիրառելի էր ընդհուպ մինչեւ Ի դարասկիզբ:

Նկատաբար, կարող ենք նշել, որ այս ծիսական բարեփոխման կարեւոր կողմերից (aspect) մեկը ծիսական կյանքի կարգավորումն էր, որին անուղղակիորեն առնչվում էր Սաղմոսարանի միջոցով իրականացվող կրթական-մանկավարժական ավանդական մեթոդը: Ծիսական բարեկարգման մյուս կարեւոր կողմը ճաշոց գրքում փեղադրված սուրբգրային դրվագների բացառությունն է⁸⁹: Խոսքը մասնավորապես սուրբգրային երկու դրվագների մեկնության մասին է՝ վերագրված Նամամին. Նորի գրքի ԼԸ 2-ԼԹ 30 հարվածը եւ Սաղմոս ՃԺԸ (ՃԺԹ)-ն: Այս վերջին դրվագի վերաբերյալ որեւէ մասնավոր փեղեկություն չունենք, եւ պետք է պարզապես գոհանալ Սրբեփանոս Ասողիկի հիշատակությամբ⁹⁰: Վերջինս նշում է նաև, որ Նորի գրքի դրվագը ոչ թե մեկնվել է, այլ թարգմանվել: Սակայն այս վերջին երկի համեմատությունը Նամամին վերագրված մյուս երկերի հետ վերհանում է նրա զուր մեկնաբանական բնույթը⁹¹: Նախ, «թարգմանենմ» բայը դասական հայերենում ունի նաև մեկնելու, մեկնաբանելու իմաստ⁹²: Այնուհետեւ, Երոսաղեմի ՏՊ 121 ձեռագիր ճաշոցում «թարգմանենմ»-ը հանդես է գալիս իբրեւ թրիստոնական հավատի քարոզության մեկ այլ ձև. «Յետ Սաղմոսին նստին ի թարգմանութիւն եւ արձակին երախայքն»⁹³: Նշանակում է՝ այս հիշատակության համաձայն «թարգմանութիւն»-ը նախատեսված է միայն լուսավորվածների, այսինքն՝ մկրտվածների համար⁹⁴: Այս առանձնահատկությունը կապված է հայրաբանական աստվածաբանական մարքի արտահայտության հետ: Նոր ԼԸ-ն հարվածը հայրաբանական մեկնողական գրականության մեջ ընկալ-

88 ՊԱ, էջ 51:

89 Տե՛ս **Շ. արք. Անանյան**, Նամամ Արեւելցի՝ մեկնիչ Սուրբ Գրոց, էջ 52-55:

90 Նաշվի առնելով Սաղմոսաց գրքին եւ Սաղմոս ՃԺԸ-ին վերաբերող փեղեկությունների միջեւ առկա նմանությունները՝ «ի գիրս մի» արտահայտությամբ («Պատմութիւն փեղեկական», էջ 55), կարող ենք, թերեւս, եզրակացնել, որ խոսքընդամենը սուրբգրային ընթերցումները մասնավորապես մեկ միասնական գրքի մեջ խմբավորելու ձեռնարկի մասին է:

91 Այս մասին ավելի մանրամասն փնտրելու համար տե՛ս **Շ. արք. Անանյան**, նշ. աշխ., էջ 51:

92 ԲՆՆԼ, էջ 798-799: Թարգմանության եւ մեկնության իմաստային-գրական փոխհարաբերության մասին փնտրելու համար տե՛ս **J.-P. Mahé**, «Traduction et Exégèse: Réflexions sur l'exemple arménien», *Mélanges Antoine Guillaumont* (Cahiers d'Orientalisme), Genève.

93 Տե՛ս **Athanasios Renoux**, *Le Codex arménien Jérusalem 121*, II. Edition comparée du texte et de deux autres manuscrits, *Patrologia Orientalis* 36, fasc. 2, 168, Brepols, Turnhout/Belgique 1971:

94 Տե՛ս **K. McDonnell** և **G. T. Montagne**, *Christian Initiation and Baptism in the Holy Spirit: Evidence from the First Eight Centuries*, Collegeville, Minnesota, 1994, էջ 191-193, **П. Гаврилюк**, *История катехизации в древней Церкви*, Москва, 2001, էջ 155:

վում էր իբրև Աստվածորդու խորհրդաբանական հայտնություն⁹⁵։ Արդեն Տերպուլիանոսը⁹⁶, Նդեմնա Նոմնացին⁹⁷ ու Թեոփիլոս Անտիոքացին⁹⁸ մեծ կարևորություն էին տալիս հինկ-պակարանյան այս պատմին՝ այն համարելով իբրև Աստվածորդու մասին եղած հինկ-պակարանյան ամենահին մարգարեություններից մեկը։ Կյուրեղ Երուսաղեմացին նույնպես այն ներկայացնում է որպես աստվածահայտնություն՝ երկու ճառ (Թ- և ԺԱ) նվիրելով Նոր ԼԸ 2-ԼԹ- 30 հարվածի բացատրությանը⁹⁹։ Այսպիսով, Կեղծ Նամամի գրչի արդյունք հանդիսացող այս մեկնությունը կարող է դիտարկվել ծիսական քարոզչության և վարդապետության վերոնշյալ շրջանակում¹⁰⁰։

Ծիսական բարեփոխումները և երուսաղեմյան ավանդությունը։ Վերը նշված դիտարկումները մտածել են տալիս ծիսական բարեփոխումների աղբյուրների մասին, որոնք իրենց արտահայտումն են գտնում Աղվանից Եկեղեցում Կեղծ Նամամի երկի միջոցով։ Ն^ժ 121 ձեռագիր Ճաշոցի հրապարակիչն իրավամբ շեշտում է երուսաղեմյան և հայկական ավանդության ճաշոցների միջև առկա սերտ կապը։ Այս շեշտադրումը լիովին կիրառելի է նաև Աղվանից Եկեղեցու ծիսական ավանդության համար՝ հաշվի առնելով Երուսաղեմում կառուցված և գործող բազմաթիվ աղվանական վանքերն ու եկեղեցիները¹⁰¹, որոնք էական դեր էին խաղում Աղվանից եկեղեցու հոգևոր կյանքում¹⁰²։ Նարկ է նշել, որ Նոր ԼԸ 2-ԼԹ- 30-ն առկա է Երուսաղեմի Ճաշոցում՝ իբրև Նարության ճրագալույցի յոթերորդ ընթերցված¹⁰³։ Նայ միջնադարյան իրականության մեջ Նոր ԼԸ 2-ԼԹ- 30-ը կարևորվել է Սրբեփանոս Սյունեցու (Ը դ.) և Գրիգոր Նարեկացու (Ժ դ.) մեկնություններով¹⁰⁴։ Երուսաղեմյան ուսուցողական ավանդությունը, որ հայ եկեղեցական ավանդությանն էր անցել Կյուրեղ Երուսաղեմացու երկի թարգմանությամբ, Է-Ը դդ. արդեն աղվանից հեղինակների համար մեծագույն հեղինակությունն էր ծիսական-դավանական հարցերում։ Այսպես, Է դարում, ինչպես վկայում է Մովսես Կաղանկավազին, Արցախում հայտնաբերված մատուցների վրա գրված էր. «Երուսաղեմեան մասնաւորեալ նշխարք սրբոց են»¹⁰⁵։ Վերջապես, Աղվանից Կաթողիկոս Միքայելը (Ը դ.) իր նամակներից մեկում, բացատրելով Ծննդյան և Աստվածահայտնության փոքրիկ փոխակապարտությանց առանձնահատկությու-

95 Մեր օրերում նույնպես Նայ Առաքելական Եկեղեցու պաշտոնական Ճաշոց գրքում (Վաղարշապատ, 1872, էջ 255-256) Նորի գրքի վերոհիշյալ դրվագն ընդգրկված է Սուրբ Ծննդյան և Զատիկի ճրագալույցների ընթերցվածներում։
96 Տե՛ս PG 6; Contra Praeaxis, VI 23; հմմտ. նաև **Geoffrey Dunn**, Tertullian, Routledge, London/New York 2004, էջ 24-26։

97 Տե՛ս "Épître aux Corinthiens", ներած., քնն. բնագիր, թրգմ. և ծնթգր. **Annie Jaubert**-ի, Sources Chrétiennes 167, Paris 1971, էջ 134-135։

98 Տե՛ս "Trois livres à Autolycus", քնն. բնագիրը, ներած. և ծնթգր. **G. Bardy**-ի, թրգմ. **J. Sender**-ի, SC 20, Paris 1948, էջ 73։

99 Տե՛ս PG, 20; IX 11, 23։

100 Նայ եկեղեցու քարոզչական ավանդության մասին տե՛ս **C. Ananyan**, Prédication et liturgie: la tradition de l'Église apostolique arménienne, *Célébrer* 7 (2009), 369, էջ 48-50։

101 Երուսաղեմում Աղվանից եկեղեցիների ցուցակը և նկարագրությունը պահպանվել է Անտարաս վարդապետի երկում (Է դ.)՝ Մովսես Կաղանկավազի-Դասխուրանցու «Աղուանից պատմութեան» մեջ (էջ 285-286)։ Տե՛ս նաև **Nina Garsoïan**, Le Témoignage d'Anastase sur les monastères arméniens de Jérusalem à la fin du VI^e siècle, Melanges G. Dagron, *Travaux et Mémoires* 14, Paris 2002, էջ 257-267։

102 Տե՛ս **Ա. Մնացականյան**, նշ. աշխ., էջ 96-102։

103 Տե՛ս **Athanasie Renoux**, նշ. աշխ., էջ 302։

104 Տե՛ս **Ն. Ք. Չրաքման**, Բախքիտ Երուսաղեմացի, Մեկնութիւն Յոբայ, Վենետիկ, 1913, էջ 32-49։

105 Տե՛ս **Ա. Մնացականյան**, նշ. աշխ., էջ 149։ ԴԱ, էջ 207։

յուններն ու ավանդական հիմքերը, հենվում է երուսաղեմյան հին ավանդության վրա¹⁰⁶։

Երուսաղեմյան ավանդությունը, որ ազդեցիկ տեղ ուներ Աղվանից Եկեղեցու կյանքում, նաև մի նախնական կարարեղարիտ էր, որի հիման վրա Կովկասի եկեղեցիների կյանքում իրականացվում էին անհրաժեշտ բարեփոխումներն ու ծիսական փոփոխությունները։ Այս գաղափարն արտահայտված է Անանիա Մոկացու համակերպից մեկում։ Խոսքով Անձեուացու հետ իր ջարդագոյության մեջ Մոկացին իր գաղափարներին իբրև հենք վկայակոչում է երուսաղեմյան ավանդությունը։

«Իսկ ի լուով չորեքեզերեան աշխարհի առաքարանաւն, թէպէտ ներեցին զհարկն Երուսաղէմի, այլ ամենայն ազգաց առ մերձակայսն եւ հաւանելիսն ոչ թողացուցին քակել ի միաբանական պարտոյ։ Եւ փոխանակ սրբոյ քաղաքին, յիւրաքանչիւր ի պարշաճն վայրի գաղափարեցին զտիպսն Երուսաղէմի, ըստ ամենայն մասանց աշխարհաց եւ յանձնիրոցն զյխառքագունիցն տեղեաց եւ վերակացուաց անճողապրելի սահմանեցին լուով զպայման հարկին»¹⁰⁷։

Նամամ մարենագրի այլ երկեր.-Բացի ծիսական բարեփոխության եւ պաշտամունքային բնույթի երկերից՝ Կեղծ Նամամի կամ Նամամ մարենագրի գրչին են վերագրվել նաև քերականական, մեկնաբանական եւ երաժշտական բնույթի այլ երկեր։

Կեղծ Նամամի քերականական աշխատությունը հրատարակել է Նիկողայոս Ադոնցը Դիոնիսիոս Թրակացուն նվիրված իր աշխատության մեջ¹⁰⁸։ Այս քերականական աշխատանքի յուրահարկությունը պայմանավորված է մեկնաբանական որոշ գաղափարների առկայությամբ, որով այն կարող է բնութագրվել ոչ միայն իբրև քերականություն, այլև մեկնաբանական տեսության որոշ դրույթների ամփոփում¹⁰⁹։

Կեղծ Նամամի մեկնաբանական երկերի շարքին են դասվել նաև Առակաց գրքի մի մեկնություն եւ Դիոնիսիոս Արիտագացու երկերի մի լուծմունք։ Առակաց գրքի մեկնության բնական բնագիրը հրատարակել է Ռ. Թոմսոնը¹¹⁰։ Դիոնիսիոսի երկերի լուծմունքի հրատարակիչ Ս. Լա Պորպան, իր սրվարածավալ ուսումնասիրություն-թարգմանության մեջ¹¹¹, հարակորեն ցույց է տվել լուծմունքի՝ ավելի ուշ շրջանում սրելով՝ լինելու փաստը։ Ըստ հրատարակչի՝ երկի մեջ առկա լեզվական եւ փոխառաջանական առանձնահատկությունները երկի սրելծումը փաստում են մինչև ԺԳ դ.՝ Կիլիկյան արձարեղարի շրջան։

106 Տե՛ս ՊԱ, էջ 314. «Նորին Միքայելի՝ Աղուանից Նայրասեպին խնդիր յաղագս պապանձմանն Զաքարիայ եւ ծննդեան եւ յայրնութեան Փրկչին ընդդէմ երկաբնակ աղանդոյն»։ Այս նույն համակում Միքայել Կաթողիկոսը իբրև հավարի եւ ավանդության բացառիկ հիմք է ընդունում երուսաղեմյան ավանդությունը. «...որ եւ մեր նախնեացն ստանդեցաւ, նոյնպէս եւ ունիմք այժմ, որպէս ասէ, «Եթէ օրէնք ի Սիոն ելցեն, եւ Բանն Աստուծոյ՝ յԵրուսաղէմ», ՊԱ, էջ 316։

107 Տե՛ս «Մարենագիրք Նայոց», հղ. Ժ, էջ 288։

108 Տե՛ս **Н. Адонц**, Дионисий Фракийский и его армянские толкователи, Петроград 1915, էջ 253-284։ Նույնի ֆրանսերեն թարգմանությունը՝ **N. Adonz**, Denys de Thrace et les commentateurs arméniens, tr. du russe par M. Leroy, Louvain 1970։

109 Այս մասին ավելի մանրամասն տե՛ս **Շ. արդ. Անուկյան**, Նամամ Արեւելցի՝ մեկնիչ Սուրբ Գրոց, էջ 54-58։

110 Տե՛ս **Hamam**, Commentary on the Book of Proverbs, ed. et tr. par R. W. Thomson, Peeters, 2005։

111 Տե՛ս **Sergio La Porta**, Two Anonymous Sets of Scholia on Dyonisius the Areopagite's Heavenly Hierarchy, CSCO, vol. 623, Lovanii, Peeters 2008, vol. 624; անգլերեն թարգմանություն, vol. 625; ներածություն եւ ձեռագրական ավանդույթի պատմություն։

Վերջապես, Կեղծ Նամամին վերագրված մեկ այլ երաժշտաբանական երկ էլ հրապարակվել է ֆրանսերեն զուգադիր թարգմանությամբ՝ ԺԹ դարի վերջին¹¹²: Երկի հրապարակիչը փորձել է Նովիաննես Երզնկացու քերականագիտական երկում¹¹³ պահպանված հապրվածների և Նամամին վերագրված երկի եզրերի համեմատությամբ հաստատել երաժշտագիտական այդ կտորի հեղինակային պատկանելությունը¹¹⁴: Սակայն ենթադրաբար արաբերենից թարգմանված այդ հապրվածի մեջ առկա որոշ բառերի պարզ ուղղագրական դիտարկումն իսկ այն թվագրում է ավելի ուշ շրջանով: Օրինակ, խոսելով երգի առողջաբար հարկությունների մասին, հեղինակն իր ասածը հիմնավորում է ըստ «յառաջին ֆիլիսոֆայիցն» խոսքերի¹¹⁵: Նստակ է, որ «փիլիսոփայ» ձևի «ֆիլիսոֆա»-ն ենթադրել է քալիս ավելի ուշ շրջանի բառապաշար¹¹⁶: Ավելին, նույն հապրվածում թվարկվում են Պլատոն, Արիստոտել և Պարոմենոս փիլիսոփաների անունները հետևյալ ուղղագրությամբ՝ «Ափլատոն, Արստոն և Փրլոմենոս», որոնք այնուր Վկայված չեն Ե-Ժ դարերի հայ մատենագրության մեջ: Կասկածից վեր է, որ անունների նմանապիպ արտասանությունն ու ուղղագրությունն առաջացել է ավելի ուշ շրջանում՝ հավանաբար ԺԳ-ԺԵ դարերում:

Նամամ Արեւելցու պատմականորեն երկարված անձի և գործի մասին մեր հոգվածում փորձեցինք որքան հնարավոր է պարանջատել պատմականն ու գեղարվեստական պատումը՝ ըստ ժամանակաշրջանի սկզբնաղբյուրների: Թագավորի և աստվածաբան վարդապետի կերպարների այս միաձուլումն ինչ-որ իմաստով նաև Կովկասի ժողովուրդների կյանքում նրանց ներդրած բարեկարգչական-ազատագրական պայքարների արձագանքի արդյունքն էր: Սակայն պատմական և հնագիտական տվյալների համեմատությունը հստակորեն ցույց տվեց, որ Աղվանից պատմության էջերում պետք է, այնուամենայնիվ, քարքերել երկու պատմականորեն քարքեր անձանց՝ Նամամ թագավորին և Նամամ մատենագրին: Այս քարքերակումը հարկապես զգալի է Նամամի դարաշրջանին ավելի մոտ եղող սկզբնաղբյուրները բնակիս (օր., Սյուսիանոս Առողիկ, Նովիաննես Դրասխանակերպի, արաբական և վրացական աղբյուրներ): Նամենայն դեպս, Նամամ թագավորի անձով ճշխացած Նամամ մատենագրի երկերն իրենց կարևոր և անհերքելի ներդրումն են բերել ինչպես Աղվանից, այնպես էլ հայ միջնադարյան գրականության անդասարան: Եկեղեցական կյանքում այնքան մեծ է եղել Նամամ մատենագրի ներդրումը հարկապես ծխական

112 Տե՛ս «Նամաօք յերաժշտական արուեստէ ի յարսպ գրոց», «Բագմավէպ», 1875, էջ 358-366: Նրապարակությունը՝ անանուն:

113 Նովիաննես Երզնկացու՝ ձայնի մասին արտահայտած տեսակետների համար տե՛ս **Գ. Զառուկյան**, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Նախասրանում, Երևան 1954, էջ 268-269:

114 Տե՛ս «Նամաօք յերաժշտական արուեստէ», էջ 359. «Ժսկ թէ ի մերոց ո՛վ է արոր թարգմանն՝ մեզ յայրնի չէ, բայց նման բառերով եւ ոճով կը գրնուի ուրիշ պարամիկ մ՛ալ մեր քերականութեանց մէջ, որ եւ Նամամայ կ'ընծայուի, որմէ կարեւոր մասերն կը դնենք մեր հրապարակածին մէջ. կըրնայ ըլլալ որ այս հարուածին ալ թարգմանիչն Նամամ ըլլայ»: Նմմաբ. նաեւ էջ 364:

115 Անդ, էջ 365:

116 Տե՛ս **Ռ. Ղազարյան, Ն. Ավերիսյան**, Միջին հայերենի բառարան, Երևան 1992, էջ 465: «ֆիլիսոֆայ» բառի մեկ այլ քարքերակ է «ֆիլիսոֆայ»-ն: Փ-Ֆ հնչյունադարձման մասին տե՛ս **Ս. Ղազարյան**, Միջին հայերեն, գիրք Ա, Երևան, 1960, էջ 271, հմմաբ. նաեւ **Է. Աղայան** (յմբ.), Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, Երևան, 1972:

ուրբում, որ մի շարք հիշարարարաններ և ձեռագիր վկայություններ նրան ընդունում են իբրև ժամանակաշրջանի ամենանշանավոր վարդապետներից մեկը: Այս որակումը չի սահմանափակվում միայն ծիսական ուրբով, սուրբգրային և քերականական իր մեկնություններով՝ Նամամ մարենագիրը մեկընդմիջի հայ մարենագրության պարմության մեջ գրավել է իր տեղը՝ իբրև ժամանակի աշխարհիկ և հոգևոր արվեստների ներհմուր մասնագետ՝ մերօրյա ընթերցողին փոխանցելով Թ-Ժ դարի հայ մշակույթի և աստվածաբանական մտքի ծաղկման յուրօրինակ դրվագներից մեկը...